

**Ключевые слова:** средневековая армянская философия, этика, свобода воли, разум, Иоанн Воротнеци, человек, душа и тело, мораль, добро и зло, ответственность.

## THE ISSUE OF FREEDOM OF WILL IN HOVHAN VOROTNETSI'S ETHIC

**Anush Minasyan**

*Candidate of Philosophical Sciences,  
Senior Researcher of the Institute of Philosophy,  
Sociology and Law of NAS RA*

### SUMMARY

Hovhan Vorotnetsi (1315-1388) regards the ethic or the discipline about virtues as a constituent part of practical philosophy, which studies the sphere of morality, i.e., the phenomena, which are considered by practical reason or contemplation, and conditioned by the free will of a person. The freedom of will, as Vorotnetsi views it, implies that man's activity, actions and behavior are neither predefined or predetermined, but rather the outcome of man's conscious, free choice. Man's "self-will" is provided by its intelligence. Endowed with intelligence and free will, man is responsible for his/her actions. Hovhan Vorotnetsi regards man's "self-will" or the freedom of will as an inherent attribute of human nature, a distinctive feature, ought to which man acts as a moral creature.

**Key words:** Medieval Armenian philosophy, ethic, freedom of will, intelligence, Hovhan Vorotnetsi (John of Vorotan), man, soul and body, morality, good and evil, responsibility.

**ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԻ, ՁԵՎԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱՐԿՈՒՄԸ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ՀԱՅՈՑ  
ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐԶՈՒՄ»**

**Լիլիթ Սարվազյան**

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Հայ միջնադարյան իրավաբաղադրական մշակույթի պատմության մեջ էական ներդրում ունի փիլիսոփա, աստվածաբան, օրենսգետ, եկեղեցական և հասարակական-քաղաքական գործիչ Մխիթար Գոշը

(մոտ. 1130-1213): Նա թողել է գրական հսկայական ժառանգություն, Կիրակոս Գանձակեցու արժեվորմամբ՝ **«...շիրմարձան իմաստախոհ գրքեր՝ ուսումնասերների օգտի համար»**<sup>1</sup>: Դրանք են՝ «Երեմիայի մարգարեության համառոտ մեկնություն», «Ողբ մեր էության մասին», «Ուղղափառ հավատի հայտարարությունը՝ ընդդեմ հերձվածողների», «Շարք հայրապետացն Աղվանից» («Աղվանական Քրոնիկոն»), «Առակներ» և այլն: Գոշի գլուխգործոցը **«Գիրք Դատաստանի»** («Դատաստանագիրք Հայոց», 1184) աշխատությունն է, որն առաջնակարգ տեղ է գրավել աշխարհի օրենսդրական ճանաչված հուշարձանների շարքում:

XII դարակեսին հայ ժողովրդի իրավագիտակցության մակարդակն այնքան բարձր էր, որ ըմբռնել է աշխարհիկ-քաղաքական օրենքների անհրաժեշտությունը՝ ապահովելու **ազգային դատավարական ինքնությունը**: Հայտնի է, որ մահմեդական տիրակալները քրիստոնյաների ներքին գործերն իրենց օրենսդրությամբ չէին քննում: Ներսես Լամբրոնացու վկայությամբ՝ Գրիգոր Դ. Տղայի հայրապետության (1173-1193) օրոք «...քաղաքների ու գավառների բնակիչները նորին սրբազնությունից աշխարհիկ օրենքներ խնդրեցին», բայց «հայոց մեջ՝ ո՛չ եկեղեցիներում, ո՛չ էլ իշխանների մոտ, չգտնվեցին աշխարհիկ օրենքներ»<sup>2</sup>: Կաթողիկոսական պահոցներում առկա էին միայն կանոնական օրենքներ: «Դատաստանագրքի» ստեղծումը պայմանավորված էր տվյալ պատմաշրջանի իրավական ու քաղաքական իրողություններով<sup>3</sup>: Բուն Հայաստանում և Կիլիկիայում հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքար էր մղում՝ վերականգնելու քաղաքական անկախությունն ու ազգային պետականությունը: Ուստի՝ «Դատաստանագիրքը» կազմվեց որպես հայկական ապագա պետության օրենսգիրք:

Մխիթար Գոշի օրենսդրական գործունեության հիմքում **Հայաստանի ինքնիշխան, կենտրոնացված պետականության գաղափարն էր**, որի

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն /Թարգմ., առաջ. և ծանոթ.՝ Վ. Առաքելյանի, Եր., 1982, էջ 161:

<sup>2</sup> Տես՝ «Քաղաքային Օրենք Ներսիսի Լամբրոնացու ըստ Կոստանդիանոսի, Թեոդոսի եւ Լեոնի թագաւորաց Հռովմայեցոց», Առաջաբան, Պարիս, 1907, էջ 5:

<sup>3</sup> Դատաստանագիրք գրելու 12 պատճառները Գոշը մեկնաբանում է Դատաստանագրքի «Նախադրության» Բ գլխում: Տես՝ Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի /Աշխատ.՝ Խ. Թորոսյանի, Եր., 1975, էջ 2-5:

իրականացումը ենթադրում էր մի շարք հիմնահարցերի լուծում. ներազգային ուժերի համախմբում, կազմալուծված զինված ուժերի միավորում, տեղական իշխանությունների համագործակցում, անջատողական-կենտրոնախույս քաղաքականության չեզոքացում, արդարության սկզբունքով միջդասային հակասությունների մեղմում, սոցիալական ներդաշնակության հաստատում, հոգևոր-բարոյական գաղափարախոսության ազդեցության ծավալում և այլն: Այս խնդիրներն արտացոլված են «Դատաստանագրքում», որոնք փիլիսոփայական ու իրավական հարթության վրա լուծեց հանձարեղ մտածողը:

Հիմնվելով Աստվածաշնչի վրա՝ Մխիթար Գոշը իշխանության աղբյուր համարում է **Աստծուն**, Աստվածային կամքը, Նախասահմանությունը, քանզի «...չկայ իշխանութիւն որ չէ Աստուածանից. եւ ներկայ իշխանութիւններն Աստուածանից են կարգուած» (Հռովմ., Գլ. ԺԳ, 1-2): Միաժամանակ՝ օրենսգետը հաստատում է ազգերի քաղաքական ինքնակազմակերպման, ինքնակառավարման, իրավունքները: Ազգային քաղաքական համակարգում Գոշն առանձնացնում է իշխանության երկու կառույց՝ **պետական (աշխարհիկ) և եկեղեցական (հոգևոր)**: Իշխանության բաժանման սկզբունքով պետք է ապահովվեր հայոց պետականությունն ու դրա հաստատությունը՝ ընդգրկելով ազգային կեցության բոլոր ոլորտները: Պետությունն ու Եկեղեցին այն հիմնապատկերն են, որոնց վրա հիմնվում է ազգը՝ որպես քաղաքական իրողություն:

Գոշը պետությունը պատկերացնում է որպես թագավորություն (միապետություն): Իրազեկ լինելով ազգային պատմությանը՝ նա պաշտպանում է **կենտրոնացված թագավորական իշխանության** գաղափարը: Ըստ մտածողի՝ թեև պետություն չկա Հայոց աշխարհում, բայց «...դեռևս ենք թագավորների կանոնակարգը... հանուն պատշաճության»<sup>4</sup>: Ու թեպետ շատերը ծաղրում են՝ հայոց պետության չգոյության պատճառով, սակայն պետք է հիշել, որ «...ամենայն երկրավոր թագավորություն անցավոր ու փոփոխական է, առավել ևս մեր թագավորությունը եղավ, քանզի անցյալը [թագավորությունը] մեջտեղում [այժմ] չկա... ապագայում էլ չենք

<sup>4</sup> Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցը» // **Ավագյան Ռ.**, Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, Եր., 2001, հոդ. 2, էջ 392:

ունենա, բայց ձևակերպելով եմ իդձս կատարում և [օրենսդրական] առաջարկությունս ջանում եմ ամբողջական պահել»<sup>5</sup>:

Հարկ է նշել, որ «Դատաստանագիրքը», միտված լինելով համազգային շահերին, նպաստում էր հայ ժողովրդի ինքնապահպանման ու քաղաքական ինքնորոշման գործընթացներին: Միջնադարի հայ մտածողները մշակել են *ազգային ինքնիշխանության և պետության ինքնիշխանության* (իշխանության գերակայության՝ սուվերենիտետի) ուրույն հայեցակարգ, որը համապատասխանում էր հայ ժողովրդի ազգային գաղափարախոսությանն ու ազգային-ազատագրական պայքարի պահանջներին:

Գոշը երկրի անկախությունը պատկերացնում է ինքնիշխան ուժեղ պետականությամբ, որը կապվում էր պետության գլխի՝ թագավորի անձի հետ: Ինքնիշխանությունը հիմնավորելու համար նա հաստատում է. «...*տիրապես Աստված է միայն թագավոր, և մարդիկ միայն անվանակիրներ են*, և ոչ թե ճշմարիտ [թագավոր] (ընդգծումը.- Լ.Ս.)»<sup>6</sup>: Թագավորը կարգվում է Աստծուց, և միայն Նա կարող է փոխել նրան: Այսինքն՝ թագավորն Աստծո փոխանորդն է երկրում և կառավարում է Աստծո պատվիրաններով ու ընդօրինակելով Նրան:

Գոշը սահմանում է «թագավոր» հասկացությունը՝ երկրային (աշխարհիկ) իմաստով. «...թագավորներ անվանվում են նրանք, ովքեր տիրում են իրենց ողջ ազգին և այլևայլ հարկեր են գանձում այլ ազգերից, իսկ եթե ոչ՝ ապա [իրենք] չեն հարկադրվում» («...*թագաւորք այնորիկ անուանին, որք ազգաց իւրեանց տիրեն համանգամայն եւ յայլոց հարկս ատնուն յազգաց, եւ եթե ոչ՝ ոչ հարկիցին*»)<sup>7</sup>: Այս սահմանման բովանդակությունից բխում է, որ թագավորը՝ ա) օժտված է գերիշխանությամբ, բ) պետության գլուխն է՝ ազգի գերագույն ներկայացուցիչ-տերը, գ) այլ ազգերից հարկ է գանձում, դ) եթե ուրիշներից հարկ չի վերցնում, համենայնդեպ՝ ինքը հարկատու չի դառնում: Ժամանակի ընթրումների համաձայն, այս հատկորոշիչները բավարար էին՝ թագավորի իշխանությունը համարելու գերակա<sup>8</sup>:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 399:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 392:

<sup>7</sup> Նույնը: Տես նաև՝ Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Գլ. Բ, էջ 28:

<sup>8</sup> Ինքնիշխանության ազգային և եվրոպական ընթրումների վերլուծությունը տես՝ Միքումյան Կ., Քաղաքական ուսմունքների պատմություն, Եր., 2008, էջ 194-199, 240-241,



Տվյալ պատմաշրջանում Ջաքարյան իշխաններին կոչում էին *թագավոր, շահնշահ*, ինչը վկայում է, որ նրանց իշխանապետությունը, ըստ էության, չի տարբերվել թագավորականից: Պաշտոնապես օժված չլինելով թագավոր՝ Ջաքարյանները որևէ երկրի հարկատու չէին, այլ հենց իրենք էին հարկ վերցնում ուրիշներից: Այս իրողությունը վկայում է Կիրակոս Գանձակեցին. Ջաքարեն և Բվանեն «...պարսիկների ու արաբների կողմից գրավված հայոց շատ երկրամասեր խլեցին... *Հարկատու դարձրին* նաև Կարին քաղաքի սուլթանին», և «...նրանց քաջության համբավը տարածվեց շատ երկրներ, և *շատ ազգեր*, որը սիրուց, որն էլ երկյուղից, *հարկատու դարձան նրանց*»<sup>9</sup>:

Ուշագրավ է, որ Գոշը նշում է թագավորի ինքնիշխանության հատկանիշները՝ առանց գործածելու «ինքնիշխան» հասկացությունը: Մինչդեռ Հայոց Հայրապետին առնչվող նույն հոդվածում գրում է. «Իսկ արքունիքում հայրապետը ինքնիշխան լինի նստելու, բայց ոչ արքան հայրապետի տանը» («Այլ յարքունիս *ինքնիշխան լիցի* հայրապետն նստել, այլ ոչ արքայ՝ ի տուն հայրապետի»)՝<sup>10</sup>: Ակնհայտ է, որ «Դատաստանագրքում» անվերապահ ճանաչվում է Հայոց Հայրապետության ինքնիշխանությունը:

Ինքնիշխան, ուժեղ, կենտրոնացված պետության կայունության ու հարատևման երաշխիքներից է *գահաժառանգման կարգը*, որի հիմքում հետևյալ սկզբունքն է. «Թագավորությունը սեփական է և անցնում է հորից որդուն»<sup>11</sup>: Ելնելով ժառանգական իրավունքի ազգային ավանդակարգից, ժամանակի քաղաքական իրողություններից ու պետական շահերից՝ Գոշը սահմանում է գահաժառանգման ճկուն համակարգ.

Ա. Նախ՝ հաստատում է թագավորի ժառանգների իրավահավասարությունը. «Եթե... նա ունենա որդիներ և դուստրեր՝ հավասար և արդարացի բաժանի թագավորությունը [նրանց միջև]»: Բայցև «ծագմամբ թագավոր» որդին է:

291-292: Մաֆարյան Գ., Մխիթար Գոշի պետաիրավական հայեցակարգը, «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», Գիրք III, Եր., 2013, էջ 19-120:

<sup>9</sup> Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 122-123:

<sup>10</sup> Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցը» // Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, հոդ. 2, էջ 393: Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Գլ. Բ, էջ 29:

<sup>11</sup> Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցը», հոդ. 230, էջ 515:

Բ. Թեև պատշաճ է համարում *անդրանիկ որդու գահաժառանգումը*, բայց գիտակցելով պետության գլխի կարևորությունը երկրի կառավարման գործում՝ թագավորին պատվիրում է. «...թող *առաջադն* որդուն նստեցնի թագավորական աթոռին»: Իսկ անդրանիկին հարկ է համարում պատվել ընտիր ստացվածքով:

Գ. Եթե թագավորը եղբայրներ ունի, «...նրա որդիներին իրավունք չէ վերցնել թագավորությունը», այլ եղբայրների մահից հետո միայն որդիները կարող են գահակալել: Այս դրույթում նա նկատի ունի Զաքարյան եղբայրներին:

Դ. Եթե թագավորը դուստր ունենա, «...նրան ամուսնու հետ նահապետական տուն կարգի և [դուստրը] եղբոր [ստացվածքի] կես մասն ստանա»:

Ե. Թագավորների մահից հետո «...որդու որդին ստանա աթոռը, և ոչ թե դստեր որդին»: Հակառակ պարագայում՝ դստեր ժառանգները օտարներ կհամարվեն:

Զ. Եթե թագավորը որդի չունենա, այլ դուստր, «...թագը տա իր դստերը», իսկ եթե նա ամուսնանա՝ «...իր գահը ամուսնուն տալու իրավունք ունենա», բայց մահից հետո «...նրա զավակներն օտար կհամարվեն»<sup>12</sup>: Այս հարցում Գոշը հիմնվում է Աստվածաշնչյան օրենքների վրա (տես՝ Թուգ. ԻԷ, 8-11):

Է. Թագավորն իրավունք ունի կտակ կազմել և այն փոփոխել իր կենդանության օրոք: Եթե նա ժառանգ չունի իր տոհմից, «...իրավունք ունենա իր թագը օտարի տալու, բայց *ոչ դավանանքով [օտարի]*»: Իսկ եթե արքայական տոհմից լինեն ժառանգներ, «...ամենամերձավորները լինեն [թագաժառանգ]»: Այս կանոնակարգը վերաբերում է նաև իշխաններին ու ազնվականներին, բայց «...թագավորեցնելը առանց հայրապետի կարգադրության չլինի»<sup>13</sup>:

Այդպիսով՝ գահաժառանգությունը պետք է կատարվեր ուղղակի՝ վարընթաց գծով արյունակից ժառանգներին. թագավորի որդիներից «առաջադնին», եղբորը կամ դստերը՝ առանց վերջինիս որդիներին փոխանցելու:

<sup>12</sup> Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցը» // Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի զանազան, Գիրք 1, հոդ. 2, էջ 392:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 393:

Ըստ «Դատաստանագրքի»՝ թագավորի անձը սրբազան ու անձեռնմխելի է: Նրա՝ որպես պետական իշխանության գերագույն կրողի *բացառիկ իրավունքներն են* պատերազմ հայտարարելը, արտաքին հարաբերությունները կարգավորելը, քաղաքների, բերդերի, կամուրջների կառուցումը, աշխարհագիր անցկացնելը, դրամ հատելը՝ «ըստ օրենսգրքի օրենքների», մահապատժի դատավճիռը, ներման իրավունքը և այլն:

Գոշի հայեցակարգում ուրվագծվում է *ազգային իրավական պետության մոդել*. երկրի բոլոր խավերը, այդ թվում՝ բարձրաշխարհիկ իշխանները, եկեղեցականները և նույնիսկ թագավորը ենթարկվում են որոշակի իրավանորմերի: Արքայի *պարտականություններն են*՝ կառավարում արդարության սկզբունքով («...ամեն պարագայում և ամեն գործի մեջ իրավունքով [թող] վարվի հավատացյալ թագավորը»), երկրի խաղաղության պահպանում, ներքին պառակտումների կանխում: Նա պետք է լինի Հայ առաքելական եկեղեցու անդամ, օրինակ վերցնի բարեպաշտներից, «...հեթանոս թագավորների օրենքով հարձեր չպահի, այլ օրինավոր ամուսնության մեջ լինի, քանզի նրան իշխանություն է [տրված] հայրապետի հետ ստյան ելնել»<sup>14</sup>:

Գոշը կարևորում է թագավորի *մարդասիրությունը*՝ կոչ անելով զերծ մնալ բռնություններից, խուսափել սպանություններից՝ այլազգիների հետ պատերազմի ավարտից հետո «...միայն պատերազմի պատճառ [հանդիսացող] այլազգիներին [սպանի]»: Իսկ թե՛ այլ երկիր պաշարի, պետք է նախ խաղաղության կոչ անի, միայն դիմադրության դեպքում դավադիրներին սպանի և մյուսներին հարկատու դարձնի: Քաղաքները, բերդերը թշնամուն մատնողի համար Գոշը սահմանում է մահապատժ, բայցև թագավորին հորդորում է. «...հանուն մեր օրենքների մարդասիրության՝ խրատի այս կամ այն ձևով, որպեսզի ապաշխարության հասնի և չկորչի...»<sup>15</sup>:

Պետության աստիճանակարգում ինքնիշխան թագավորին ստորադասվում են աշխարհիկ իշխանները, որոնց իրավունքներն ու պարտականությունները Գոշը սահմանում է՝ ելնելով *կառավարման կենտրոնացման և տեղական մարմինների հարաբերական ապակենտրոնացման սկզբունքներից*: Հասկանալով, որ Հայաստանի

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 393-394:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 394:

քաղաքական առկա վիճակի պատճառներից են երկրի զինված ուժերի ցրվածությունն ու իշխանների՝ իրենց գավառներում ներփակվելը, նա քննադատում է այն իշխաններին, ովքեր անջատամտությամբ «...լաւ համարէին ի ստրկության կալ ամենայն ազգաց, քան թէ հնազանդել միմեանց և կեալ յազատության»<sup>16</sup>: Գոշը փորձում է իրավական հարթության վրա լուծել իշխանների կենտրոնախույս ձգտումները չեզոքացնելու խնդիրը, ինչն այդ ժամանակ հնարավոր էր միայն ստորակարգության սկզբունքով:

Օրենսդետը հստակ սահմանում է կենտրոնական և տեղական իշխանությունների իրավասությունները: Գերակա իշխանություն ունի միայն թագավորը: Նա է կարգում իշխաններին: Վերջիններս տեր ու տնօրեն են իրենց տիրույթներում. «Թագավորի [կողմից] իշխանին տրված գավառում, եթե ըստ նրա կառուցվի բերդ կամ առևտրի ավան, կամ որևէ նահանգի ավերակներ [վերաշինի], պետք է իշխանի ժառանգությունը համարվի»<sup>17</sup>: Ընդ որում՝ եթե իշխանը մեծ հանցանք չի գործում, ժառանգական իրավունքը նրա մահից հետո փոխանցվում է որդիներին՝ արքայի հրամանով:

Թագավորի բացառիկ որոշ իրավունքներից (քաղաքների, բերդերի, կամուրջների կառուցում, դրամի հատում և այլն) իշխանները կարող են օգտվել միայն արքայական կարգադրությամբ: Նրանք իրավունք ունեն պատժել գողերին, բայց առանց թագավորի հրամանի՝ իրավունք չունեն մահապատժի ենթարկել մարդասպաններին: Իշխաններին արգելվում է առանց դատավճռի պատժել կամ տուգանել աշխատողներին: Պատժել թույլատրվում է, եթե «...տերության հանդեպ հանցավոր գտնվի, այլ բաներում հանցավոր եղողներին թող դատավորները վճիռ կայացնեն»<sup>18</sup>: Պատերազմի ժամանակ գլխավոր ավարը՝ ոսկին, արքայինն է, իսկ արծաթը՝ իշխաններինը, պղինձը, երկաթը և այլն՝ գորքինը: Գերիների ու ավարի կեսը թագավորինն է, մյուս կեսը՝ գորքինը: Թագավորն ու իշխանները պարտավոր են տասանորդ տալ եկեղեցուն:

Գոշը սահմանում է **աշխարհիկ պաշտոնյաների պարտականությունները**. արդարացի կառավարում՝ ըստ օրենքների, չափավոր հարկերի սահմանում. «Բնակիչները արհեստներով կամ առևտրով պետք է հարկադրվեն, քանզի քրիստոնյաներին գլխահարկ

<sup>16</sup> Հայոց տրվականները /Աշխատ.՝ Տ. Մանուկյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 24:

<sup>17</sup> Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցը», հոդ. 2, էջ 398:

<sup>18</sup> Նույնը:

չկա, գլխահարկը այլադավաններինն է, երբ բռնությամբ հարկատու են դարձվում: Ըստ Գոշի՝ թագավորն ու իշխաններն ունեն հողի և ոչ ջրի իրավունք: Հարկերը տարբեր չափով են սահմանվում քրիստոնյաների ու այլադավանների համար: Ուստի՝ «...իշխաններին վայել չէ այլադավանների նման, հարկել հավատացողներին»<sup>19</sup>: «Դատաստանագրքում» չափորոշված են տարաբնույթ հարկեր՝ անդաստանների, այգիների, պարտեզների, կենդանիների, ինչպես նաև ջրօգտագործման համար:

Գոշը սահմանում է *իշխաններին ենթակա դասերի ստորակարգությունը*, ըստ որի՝ իշխանաց իշխանին ենթակա են իշխանները, վերջիններիս՝ ազնվականները, նրանց էլ՝ շինականները: Յուրաքանչյուր դաս օժտված է որոշակի իրավունքներով և վերադասի ու պետության առջև պարտականություններով: Տարբեր պատիժներ են սահմանվում թագավորին և իշխաններին անարգողների նկատմամբ. «Եթե մեկը անիրավաբար թշնամանա թագավորների կամ իշխանների հետ՝ պատժվի, եթե կրոնավոր է՝ կարգալույծ արվի, իսկ եթե աշխարհական է՝ մեկուսացվի»: Վճռի իրավունք ունեն եպիսկոպոսներն ու վարդապետները, «...քանի որ թագավորներն ու իշխանները Աստծո պատկերն են»<sup>20</sup>:

«Դատաստանագրքում» աստիճանակարգությունն արտացոլվում է նաև *պատժի իրավունքի վերաբերյալ սահմանադրությունում*: Աստծուց կարգված թագավորներին պատժում է Աստված, ինչպես վկայում է Մ.Գիրքը: «Իսկ իշխաններին, որոնց թագավորն է կարգում իշխան, թագավորն իրավունք ունի և՛ արքայելու, և՛ պատժելու»: Այնուամենայնիվ՝ թագավորի իշխանությունն անսահմանափակ չէ, և Գոշը բացարձակապետություն չի քաղոգում. «Եթե անհրաժեշտ լինի թագավորին պատժել՝ երկրի *խաղաղության* պահպանման համար, պետք է դա արվի մեկ այլ թագավորի և հայրապետի կամքով ու ամենայն արդարությամբ»<sup>21</sup>:

Գոշը գահընկեցության իրավունք ժողովրդի համար չի սահմանում, որովհետև դա այդ ժամանակ կարող էր հանգեցնել ներազգային խռովությունների, իսկ նրա նպատակը ազգային միասնության հաստատումն էր: Բայցև չի ընդունում անօրինական դատաստաններ՝

<sup>19</sup> Նույն տեղում, հոդ. 2, էջ 397-398:

<sup>20</sup> Նույն տեղում, հոդ. 50, էջ 419:

<sup>21</sup> Նույն տեղում, հոդ. 230, էջ 515:

նույնիսկ բարձրաստիճան իշխանների կողմից: Եթե իշխանները թագավոր կարգեն անարժան մեկին, պետք է նրանց աքսորել: Ազնվականները կամ իշխաններն իրավունք չունեն «ինքնագլուխ... իրենք իրենց իշխան հռչակել», այս դեպքում թագավորն իրավունք ունի նրանց աքսորել կամ պատժել: Իշխանաց իշխանն իրավունք ունի պատժել կամ աքսորել նաև ազնվականներին, իսկ եթե «...նա կարգված է եղել նրանց (իշխանների) կողմից՝ նրանց միաբանական համաձայնությամբ անի այդ բանը»<sup>22</sup>: Իսկ եթե նա թագավորի կողմից է կարգվել, պետք է նրա կամքի համաձայն վարվի:

Ազատներն իրավունք չունեն պատժել զինվորներին, քանզի պատժելը իշխանների իրավասությունն է: Նմանապես՝ զինվորներն իրավունք չունեն ցուղացիներին աքսորել կամ պատժել, որովհետև աքսորել կարող են ազնվականները, պատժել՝ իշխանները: Գոշը հաստատում է, որ թագավորական տան վերաբերյալ վճիռները արդարացի են:

**Համապետական օրենսդրական համակարգի ստեղծումը** ենթադրում է կենտրոնական իշխանության հետևյալ առանցքային գործառույթները. ստեղծել ընդհանուր իրավական համակարգ, ապահովել իրավանդության պարտադիր գործադրություն երկրի ողջ տարածքում: Համապետական օրենքները հավասարապես պետք է տարածվեն հասարակության բոլոր խավերի ու ազգությունների վրա: Բոլոր հպատակների բնական իրավունքները (կյանքի, անձի, արժանապատվության, ունեցվածքի և այլն) պետք է պաշտպանվեն օրենքով: Թեև Գոշը չի ընդունում մահմեդական կրոնը, որի հիման վրա օրինադրված օրենքներով բռնաճնշվում են քրիստոնյաները, բայցև պաշտպանում է մահմեդականների՝ որպես հայոց թագավորության հպատակների իրավունքները՝ իրավամբ որոշ խտրություն դրսևորելով նրանց նկատմամբ:

Պետական ինքնիշխանությունը պետք է ամրապնդվեր՝ երկրում **միասնական իրավակեցության** հաստատմամբ: Ըստ Գոշի՝ առանձին գավառների տնտեսական ներփակվածությունն ու տեղական անջատողականությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է **ներքին տնտեսական ընդհանրություն**՝ որպես ժողովրդի համախմբման էական գործոն ու նախապայման: Դա ենթադրում է իրավական, մաքսային

<sup>22</sup> Նույնը:

ընդհանուր համակարգ, միասնական առևտուր և ներքին ընդհանուր շուկա:

Դատաստանագրքում սահմանվում են *առևտրի միասնական չափանիշներ* ողջ երկրի համար. արգելվում է ավատական իշխանության սահմաններում մաքսի գանձումը, հաստատվում են միասնական չափ ու կշիռ, սննդամթերքի գների սահմանման իրավունքը վերապահվում է կենտրոնական իշխանությանը՝ որպես բացառիկ մենաշնորհ. «Վաճառքը քաղաքներում կարգավորվել է թագավորների հրամաններով կամ թագավորների թույլտվությամբ՝ իշխանների միջոցով, վաճառք կատարելու կարգուկանոն է սահմանվել թե՛ քաղաքներում, թե՛ ավաններում, թե՛ գավառների այլևայլ վայրերում: Եվ առաջինը կարգավորել են չափն ու կշիռը՝ հորինելով նմուշներ»<sup>23</sup>: Ժողովրդի ներքին միասնականության երաշխիք Գոշը համարում է *ներքին ազատ շուկան*՝ դատապարտելով խարդախությունը, խաբեությունը, անօրինական գործարքները նշված ոլորտում:

*Մաքսը* նույնպես կարգավորվում է թագավորական հրամաններով, իշխաններն իրավասու չեն մաքս վերցնել՝ առանց թագավորի հրամանի: Գոշը հորդորում է մթերքի գները սահմանել՝ «ըստ տարվա բարեբերության կամ ըստ այլևայլ հանգամանքների»: Գները կարող են փոփոխվել՝ բարձրանալ կամ իջնել միայն թագավորի և իշխանների հրամաններով՝ «...գների փոփոխումները հաղորդելով գավառապետերին և ժողովրդապետերին»: Գների տատանումները պայմանավորվում են նաև գնորդների աղքատության կամ հարստության չափով: Ուստի՝ «Իշխանները թող արդար հսկողություն հանդես բերեն՝ հաստատելով բարձր և ցածր գներ, որպեսզի մշակներն ու մյուս գործակալները, ինչպեսև վաճառականները, երկուստեք չզրկեն միմյանց», և «...դատավորներն էլ կարողանան, ըստ իշխանական հրամանների, քննությունը վարել ճշտորեն»<sup>24</sup>: Այդպիսով՝ գների սահմանման Գոշի իրավական քաղաքականության հիմքում *արդարության ու ազդեցական ներդաշնակության սկզբունքներն են*:

Օրենսգետը պատիժներ է սահմանում կողոպուտի, գողության, արգելված առևտրի ու գանձումների, անօրինական դրամահատման, մաքսային չափորոշիչների խախտման համար: Օրինակ՝ *արգելված*

<sup>23</sup> Նույն տեղում, հոդ. 240, էջ 522:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 523:

**առևտրին** վերաբերող հոդվածում նշվում է. «Վաճառքի ենթակա չեն այն ունեցվածքները, որոնք տեղի եկեղեցին չի կամենում վաճառել...»: Գոշը նաև հրահանգում է. «Տեղին է և այս գիտենալ, որ եկեղեցական ինչքը **այլ ազգերի չի վաճառվում**, իսկ եթե վաճառեն, ապա այն, ինչը պիտանի չէ եկեղեցու համար և այն էլ նույն գնով (ընդգծումը.- Լ.Ս.)»<sup>25</sup>: Մեկ այլ հոդվածում դատապարտվում է խարդախությունը. «...եթե արատ, չար սովորույթ ունեցող կենդանին վաճառվի, այդ դեպքում ինչ վնաս որ հասցվի, պետք է վաճառողը դատարանով հատուցի վնասը, որովհետև Օրենքը հրահանգում է այդպիսի անասունը վերացնել և ոչ թե վաճառել»<sup>26</sup>: Վերոնշյալ հոդվածներում ակնհայտ է օրենքների ազգային, բարոյացոցիալական և առողջապահական ենթատեքստը:

**Տնտեսական վերահսկողության իրավասությամբ**՝ «[Թագավորները] կարգ են սահմանել՝ որոնել ու բացահայտել կողոպտիչներին, որպեսզի վաճառքի մեջ նենգություն չգործեն»: Խարդախները պատժվում են՝ ըստ իշխանների հրամանների: «Չափ ու կշռի միջոցով գողություն կատարողները պետք է քառապատիկը հատուցեն և խայտառակվեն հանդիմանվելով՝ ուրիշներին զգաստացնելու համար»: Ապօրինի դրամ (դահեկան) կտրողների ձեռքերը պետք է կտրվեն: «Մաքսը պետք է վերցնել օրինական կերպով», եթե այլ վայրերից են գալիս վաճառքի նպատակով: Գոշն արգելում է մաքսագանձումը ճանապարհի համար, ըստ նրա՝ «...կարելի է վարձ վերցնել, եթե թշնամիների են պատսպարել իրենց մեջ»<sup>27</sup>: Հանուն ժողովրդի բարեկեցության՝ նա նաև սահմանում է **հարկերի և տուրքերի կայուն ու որոշակի չափ**, քննադատում է վաշխառուներին, արգելում վաշխը, սաստում անօրինական պաշտոնյաներին՝ պատիժներ սահմանելով չարաշահումների համար:

Ըստ Խ. Թորոպյանի՝ «...ավատական հասարակության այն ուժերը, որոնք պայքարում էին տեղայնության, քաղաքական անջատողականության ու տնտեսական ներփակվածության դեմ, պայքարում էին հանուն քաղաքական ու տնտեսական միասնականության, հանուն ավատական արգելքներից զերծ ներքին ազատ շուկայի և այլն, պատմականորեն առաջադեմ ուժեր էին...»<sup>28</sup>: Գոշն իր ժամանակի Հայաստանի ներքին կեցության հակասական իրողությունների մեջ

<sup>25</sup> Նույն տեղում, հոդ. 142, էջ 454:

<sup>26</sup> Նույն տեղում, հոդ. 185, էջ 474:

<sup>27</sup> Նույն տեղում, հոդ. 240, էջ 522:

<sup>28</sup> Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Առաջաբան, էջ ԻԺ-Լ:



նկատում ու արժեվորում է դրական միտումները՝ իր «Դատաստանագրքում» պաշտպանելով դրանք:

Հայաստանում միասնական իրավակեցության հաստատման կարևոր գործոններից է *սոցիալական ներդաշնակությունը*, ինչը հնարավոր է սոցիալական հարաբերությունների օրենսդրական կարգավորմամբ: Գոշը մի շարք իրավանորմերով փորձում է մեղմել հասարակության տարբեր դասերի, տերերի ու ծառաների միջև առկա հակասությունները, ներդաշնակել նրանց շահերը: Տերերին հորդորում է գործել օրենքի սահմաններում՝ ըստ *արդարության սկզբունքի*, գերծմնալ կամայականությունից, «տեր կանգնել» ծառայողներին, կանխել վտանգներն աշխատանքի ժամանակ, վճարել վարձկանների վարձը և այլն: Իսկ ստորին խավերին կոչ է անում հնազանդվել տերերին, բարեխղճորեն կատարել պարտավորությունները, ժամանակին վճարել հարկերը և այլն: Գոշը հստակ սահմանել է սոցիալական յուրաքանչյուր խավի իրավունքներն ու պարտականությունները, որոնք պետք է անվերապահորեն կատարվեն:

«Դատաստանագրքի» նորմերը միտված են *մարդու արժանապատվության և իրավունքների պաշտպանությանը*, հասարակական բարօրության գաղափարի իրագործմանը, քանզի «...ոչինչ չկա [առավել] պատվական, քան հասարակական օգուտը»: Այնուհանդերձ, ինչպես հաստատում է Կ. Միրումյանը, «Ազգային պետականության բացակայության և օտար լծի առկայության պարագայում սոցիալական խնդրակարգը՝ իր ողջ կարևորությամբ, ենթարկվում է ազգային-քաղաքական ընդհանուր խնդրակարգին»<sup>29</sup>:

*Հոգևոր իշխանություն.* Հայկական թագավորության երկրորդ հիմնասյունն *ինքնիշխան ու անկախ Հայ եկեղեցին* է, որը պատմական մեծ դերակատարություն է ունեցել ժողովրդին համախմբելու, ազգային-ազատագրական պայքարը կազմակերպելու, պետականության վերականգնման ու ազգային միասնության հաստատման գործընթացներում: «Դատաստանագրքում» շեշտվում է Հայ եկեղեցու *ազգային* բնույթը, այն ազգային գաղափարախոսությունը կրող ու քարոզող կառույց է: Գոշը միանշանակ պաշտպանում է հայադավանությունը, քանզի, ինչպես Խ. Թորոսյանն է հաստատում, «...օրենքն այն ժամանակ նաև կրոն էր,

<sup>29</sup> Միրումյան Կ., Քաղաքական ուսմունքների պատմություն, էջ 245:

իսկ այս վերջինը ոչ միայն ծես էր ու հավատք, այլև **քաղաքական ինքնորոշման ու ազգային ինքնապահպանության հատու գեներ**<sup>30</sup>:

Մինչև հայոց պետականության վերահաստատումը Հայ եկեղեցին համազգային միակ կենտրոնացված կազմակերպությունն էր, որն ի գործու էր Հայաստանի տարանջատված մասերն ու առանձին իշխանապետությունները միավորել ազգային-քաղաքական գաղափարների շուրջ: Մահմեդական ցեղերի սպառնալիքի պարագայում Գոշը չի բացառում քրիստոնեական համերաշխությունը եկեղեցիների միջև: Սակայն այդ ընդհանրությունը մեկնաբանում է միայն որպես **ազգային եկեղեցիների իրավահավասարություն՝ առանց որևէ եկեղեցու վարչական գերիշխանության**: Մերժում է թե՛ հունամետությունը, թե՛ լատինամետությունը՝ պաշտպանելով ազգերի գաղափարախոսական, կրոնադավանական ազատությունը, նրանց ինքնակառավարման, սեփական պատմական ուղու ընտրության ազատությունը: Ըստ Գոշի՝ դավանաբանական տարբերությունները չպետք է ազդեն ժողովուրդների հարաբերությունների վրա: Քրիստոնյա ժողովուրդները դավանանքով չեն կարող միավորվել, բայց կարող են նաև թշնամիներ չլինել, իսկ քաղաքական հարթության վրա նույնիսկ լինել դաշնակիցներ<sup>31</sup>:

«Դատաստանագիրքը» մտակառուցված է **պետություն-եկեղեցի-ժողովուրդ** հարաբերակցության հենքի վրա: Բազմաթիվ սահմանադրույթների արտացոլում են աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների, ինչպես նաև իշխանության ու ժողովրդի միջև հարաբերությունների իրավական կարգավորման եղանակները: Գոշը ձգտում է նորմատիվ բնույթ հաղորդել նշված հարաբերություններին, որոնք կազմում են ստեղծվելիք հայոց պետության պետաիրավական հիմքը:

Եկեղեցական դասը հոգևոր իշխանության կրողն է և պետք է զբաղվի հոգևոր ոլորտով, չմիջամտի պետական-քաղաքական գործերին: Աշխարհիկ իշխանությունը պետք է զբաղվի զուտ պետական-քաղաքական խնդիրներով՝ չմիջամտելով հոգևոր գործերին, չսահմանափակի եկեղեցու սեփականությունը: Օրինակ՝ «Իշխաններն իրավունք չունեն եղբայրների վրա կաշառքով

<sup>30</sup> Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Առաջաբան, էջ ԺԶ:

<sup>31</sup> Խնդրի վերաբերյալ մանրամասն վերլուծությունը տես՝ Միրումյան Կ., նշվ. աշխ., էջ 241-243: **Мирумян К.** История политической науки. Средневековье. Возрождение. Реформация. Часть II. Ер., 2005, с. 308-310.

վանահայր նշանակել մարդու, որին նրանք չեն ուզում: Եպիսկոպոսները կարող են հարցը կարգավորել, բայց ոչ կաշառքով, այլ օրենքով»<sup>32</sup>:

Այսպիսով՝ *իշխանությունների բաժանման սկզբունքով* Գոշը հստակ սահմանազատում է պետական ու եկեղեցական իշխանությունների իրավասություններն ու գործառույթները՝ հարաբերական ինքնուրույնություն հաղորդելով դրանց: Միաժամանակ համազգային խնդիրներ լուծելու եղանակներն ու միջոցները հոգևոր և քաղաքական իշխանությունները քննարկում են միասնական խորհրդակցությամբ:

«Դատաստանագրքի» 225-րդ հոդվածում Մխիթար Գոշը սահմանում է *«Եկեղեցական և Աստվածային կարգը»*: Եկեղեցին կարգավորվել է երկնային դասերի նմանողությամբ: Նա նշում է եկեղեցու ինը դաս.

1. *Հայրապետներ*. «...իշխում են աշխարհի չորս կողմերի վրա» և ձեռնադրում արքեպիսկոպոսներին:

2. *Արքեպիսկոպոսներ*. ձեռնադրում են մետրոպոլիտներին և պատրիարքներին:

3. *Մետրոպոլիտներ*. իրավասու են ձեռնադրել եպիսկոպոսներին, իսկ երեքով՝ նաև արքեպիսկոպոսներին:

4. *Եպիսկոպոսներ*. ձեռնադրում են թեմերի առաջնորդներին, «...երեք եպիսկոպոս իշխանություն ունեն իրենց համար մետրոպոլիտ ձեռնադրել»:

5. *Քահանաներ, երեցներ*. քահանաները գործում են քաղաքներում, իսկ երեցները՝ գյուղերում և ագարակներում: Նրանք իրականացնում են եկեղեցական ձեսեր, «շնորհում խաղաղություն»: Եպիսկոպոսի թույլատրությամբ ձեռնադրվում են դպիրներ:

6. *Սարկավազներ*. քարոզում են ու սպասարկում ձեսերի ժամանակ: Կանայք ևս իրավունք ունեն ձեռնադրվել սարկավազ՝ կոչվելով սարկավագուհիներ: Նրանք քարոզում են կանանց, ընթերցում Ավետարանը: Գոշը նշում է. «Պետք չէ, որ կանանց սպասավորելը վարկաբեկիչ մի բան համարվի»<sup>33</sup>: Այն ընդունված էր դեռևս առաքելական կանոնական ավանդույթներում:

<sup>32</sup> Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցը», հոդ. 3, էջ 400:

<sup>33</sup> Նույն տեղում, հոդ. 225, էջ 509:

7. *Դպիրներ*. սպասարկում են քահանաներին:

8. *Անագանոսներ*՝ ընթերցվածքներ կարդացողներ. նրանց պարտավորությունն է՝ քարոզել ու աղոթել և արգելել «անաժանների» մուտքը եկեղեցի:

9. *Սաղմոսերգուներ*. նրանց գործը սաղմոսներ երգելն է:

Ակնհայտ է, որ եկեղեցական դասերի շարակարգն ընթանում է բարձրագույն դասից դեպի ցածրագույն՝ աստիճանական հերթականությամբ:

Հարկ է նշել, որ Դատաստանագրքի Ա խմբագրության ՄԻԵ (225) գլխում իններորդ դասի մեջ նշվում է նաև «պապ» անվանումը. «Իններորդ դասը փսաղոք, որ են սաղմոս երգողք... Արդ, է յետ այսմ եւ այլ գործ հայրապետի, զոր եւ Փռանցք պապ անուանեն, կարգել եւ զղասս թագաւորաց» (տես՝ նաև Գ. խմբագրության նույն գլխում. «Իններորդ դասը վերագոյն քան զամենեսեան՝ պապիոս, որ այժմ կոչեն Ֆռանկք պապ... Եւ գործ է նոցա կարգել զղասս թագաւորաց...»)<sup>34</sup>: Ի դեպ, Ս. Էջմիածնի միաբանությունն այս խնդրին հատուկ անդրադառնալով՝ քննադատել է հռոմեադավան հեղինակներին, ովքեր Գոշին վկայակոչում են՝ հաստատելու պապի գերիշխանությունը: Միաբանները հայտնում են, որ Ներսես Լամբրոնացու դասակարգած եկեղեցու աստիճանակարգությունը (ինը աստիճան) Գոշի «Դատաստանագրքում» միարարների կողմից «այլափոխուած ու համառոտուած» է<sup>35</sup>: Բանն այն է, որ Լամբրոնացու մոտ 9-րդ աստիճանն է՝ «Երգեցողք կամ Սաղմոսասացք», մինչդեռ «Դատաստանագրքի» ներմուծված հատվածում սաղմոսերգուին հաջորդում է պապը՝ իբրև «վերագոյն», ինչը հակասում է Հայ Կանոնական իրավունքին և եկեղեցական իրավագիտությանը:

Բնականաբար՝ *բացատվում է որ Գոշը կարող էր թույլ տալ նման թյուրիմացությունն՝ օժտված լինելով եկեղեցական սահմանադրության լիակատար իմացությամբ և հայադավան ոգով*: Միաբանների համոզմամբ՝ «Դատաստանագրքի» որոշ հատվածներ կեղծել են միաբարները՝ նպատակ ունենալով, որ Հռոմի պապը Հայաստանում ճանաչվի «թագաւոր թագաւորաց և կայսր կայսերաց»: Սակայն բոլոր ժամանակներում հայերը միշտ մերժել են նման առաջարկները:

<sup>34</sup> Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Գլ. ՄԻԵ, Ա խմբագրություն, էջ 132, Գ խմբագրություն, էջ 400:

<sup>35</sup> Տես՝ Եկեղեցական դասակարգության Բարձրագոյն աստիճանները // Արարատ, Ի Ս. Էջմիածին, 1870, էջ 221-229:

Ըստ Գոշի՝ եկեղեցին պետք է կառավարի *ճշմարիտ վճիռներով*՝ երկնային կարգերի համաձայն: Ինչպես աշխարհիկ իշխանության պարագայում, նա կարևորում է հոգևոր աստիճանակարգությունը՝ վերից վար. ծագած «խնդիրների դեպքում վերջնական խոսքը պատկանում է նրան, ով պատվո աստիճանով ավելի բարձր է»: Եկեղեցին ևս կառավարում է *կենտրոնացման և հարաբերական ապակենտրոնացման սկզբունքներով*. «Յուրաքանչյուր ոք լոկ իր տիրույթում կարող է որոշումներ կայացնել գյուղերի, քաղաքների և քահանաներ օժեղովերաբերյալ, իսկ այլ տիրույթում իշխանությունների նկատմամբ իրավունք չունի... ձեռնարկել որևէ բան, եթե չկա մայրաքաղաքի եպիսկոպոսի որոշումը: Եվ ոչ էլ ինքը՝ կաթողիկոսը, կարող է որևէ բան անել՝ առանց մյուս եպիսկոպոսների հետ խորհրդակցելու»<sup>36</sup>:

Այդպիսով՝ «Դատաստանագրքում» վերահաստատվում է դեռևս Ազգային-եկեղեցական առաջին ժողովներով սահմանված *խորհրդակցական սկզբունքը*, որը կիրառվում էր ազգային կարևորագույն խնդիրներ լուծելիս<sup>37</sup>: Այս համատեքստում հատկանշական է Գոշի հորդորը. «Պետք չէ գավառների եկեղեցիների վաղնջական ավանդույթները ենթարկել նորաձևության: Դա է հրահանգված վիճակներին, պաշտոնյաներին և ժողովրդին: Եվ եթե մի հայրապետ կամենա ավանդույթը փոխել, *պարտավոր է դա անել Ժողովով, անվտանգ, ըստ օրենսգրքի*» (ընդգծումը.- Լ.Ս.)<sup>38</sup>:

Եկեղեցին ունի իրավագործություն՝ մասնակցելու, երկրի հասարակական-քաղաքական կարևոր հարցերի քննարկմանը: Ամենայն Հայոց Հայրապետը ազատ մուտք ունի արքունիք, մասնակցում է գահաժառանգի ընտրությանը, նրա համաձայնությունն անհրաժեշտ է թագավորին գահընկեց անելիս և պատժելիս:

Հանուն բարեկարգության՝ Գոշը կարևորում է եկեղեցականների *ընտրակարգը*: Թեմերի «...աթոռակալ [եպիսկոպոս] ընտրելու պատիվն ու շնորհը գլխավորինն է, այսինքն՝ կաթողիկոսինը, որոշիչ կամքը՝ մեծ ժողովինն է»<sup>39</sup>: Միաբանության մեջ առաջնորդների հավանությամբ

<sup>36</sup> Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցը», հոդ. 157, էջ 460:

<sup>37</sup> Այս հիմնահարցի մանրամասն վերլուծությունը տես՝ Մարվազյան Լ. Խորհրդակցական սկզբունքը Հայ եկեղեցու կառավարման համակարգում, «Փյվխտփայությունը արդի աշխարհում», Գիրք IV, Եր., 2014, էջ 43-58:

<sup>38</sup> Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցը», հոդ. 161, էջ 462:

<sup>39</sup> Նույն տեղում, հոդ. 135, էջ 451:

*առաջադեմին* պետք է ընտրել՝ որպես «գլխավոր և ավագ»: Այս դեպքում անարժանը զահեղեցության չի ձգտի: Իսկ եթե բոլորը շնորհներով հավասար են, «...ավելի տարիքավորը դառնա գլխավոր»<sup>40</sup>:

*Եկեղեցու սեփականության իրավունքը, ունեցվածքի անձեռնմխելիությունը* պաշտպանելիս Գոշը հիմնվում է Սուրբ Սահակի և Բարսեղ Կեսարացու կանոնների վրա՝ միաժամանակ տեղեկացնելով. «...[դրանց] անհրաժեշտաբար որոշ օրենքների վճիռներ ենք ավելացնում»<sup>41</sup>: Օրենքները պարունակում են և՛ բարոյական խրատներ, և՛ խիստ պատիժներ՝ եկեղեցուն ու հոգևորականներին պատկանող սեփականության նկատմամբ ոտնձգությունների համար<sup>42</sup>: Վանքերը ենթակա չեն ժառանգորդման, քանզի կառուցվում են հոգևոր պահանջմունքների համար: Մահմանվում են եկեղեցու ունեցվածքի վաճառքի պայմանները. եկեղեցապատկան ունեցվածքը եպիսկոպոսի իրավասության ներքո է, ու եթե երեցները այն վաճառեն, ապա եպիսկոպոսն իրավունք ունի նույն ունեցվածքը կամ դրա արժեքը պահանջել: Ուշագրավ է, որ Գոշը ընտրության հնարավորություն է տալիս եպիսկոպոսին՝ պատվիրելով. «...թող եպիսկոպոսը կշռադատի, թե ո՛րն է իրավացին և վայելույշ. եթե կարող է՝ թող վերցնի զինը կամ վերադարձնի»<sup>43</sup>:

«Դատաստանագրքում» մեծ ուշադրություն է հատկացվում *հոգևորականների կրթությանը*. «Վարդապետները պետք է կրթված լինեն և՛ կանոնական, և՛ Հին ու Նոր կտակարանների Օրենքներով»: Նրանք պարտավոր են «...հաշվետվություն տալ ստացած գիտությունների [վերաբերյալ]», որպեսզի թերուսները, խաբեությամբ կոչում ստանալով, «...տիասության պատճառով չարիքներ չգործեն»<sup>44</sup>: Օրինակ՝ եթե քահանան անձնական վրեժխնդրությամբ բանադրի որևէ մեկին, «...հենց ինքն իրեն կդատապարտի, բայց զղջալուց հետո պարտավոր է եպիսկոպոսի խորհրդով ապաշխարել»<sup>45</sup>:

Օրենսգետը պատժում է որկրամոլ, հարբեցող, անկարգ, օրինախախտ քահանաներին՝ հրահանգելով նրանց զրկել քահանայական կարգից: Երկրային գայթակղությունների համար

<sup>40</sup> Տես՝ նույն տեղում, հոդ. 4, էջ 400-402:

<sup>41</sup> Տես՝ նույն տեղում, հոդ. 3, էջ 399:

<sup>42</sup> Տես *Մխիթար Գոշի* «Դատաստանագիրք Հայոցը», հոդ. 44, 75, 92, 142, 153:

<sup>43</sup> Նույն տեղում, հոդ. 142, էջ 454:

<sup>44</sup> Տես՝ նույն տեղում, հոդ. 4, էջ 400-402:

<sup>45</sup> Նույն տեղում, հոդ. 5, էջ 403:

եպիսկոպոսները ևս պետք է կարգալույծ արվեն, քանզի «...ոչ որ չի կարող երկու տիրոջ ծառայել»<sup>46</sup>: Ժողովրդին կողոպտելու, դրամաշորթության, շահասիրության, բռնությունների դեպքում հոգևորականներին դատում ու վճիռ է կայացնում *մեծ ժողովը*, որ «...հափշտակողներին զրկեն աթոռից և քահանայական կարգից և լրիվ ազատեն պաշտոնավարելուց»<sup>47</sup>: Միաժամանակ, հիմնվելով առաքելական կանոնների վրա, Գոշը աստվածանարգների համար նախատեսված պատժին հավասար պատժաչափ է սահմանում հոգևորականներին անարգող աշխարհիկ անհատների համար<sup>48</sup>:

Այդպիսով՝ Մ. Գոշի «Դատաստանագրքի» պետաիրավական սահմանադրություններով կանխատեսվում էին հայոց պետականության՝ ինքնիշխան թագավորության վերականգնում, ազգային ինքնակառավարման իրավունքի ամրագրում, միասնական համապետական օրենսդրության հաստատում: Ելնելով կառավարման կենտրոնացման և տեղական մարմինների հարաբերական ապակենտրոնացման սկզբունքներից, օրենսգետը հստակ սահմանում է կենտրոնական և տեղական իշխանությունների իրավունքները՝ կենտրոնական պետական իշխանության գերակայությամբ: Իշխանության բաժանման սկզբունքի հիման վրա՝ հստակ տարանջատվում են աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների իրավագործությունն ու գործառույթները: Եկեղեցական օրենքները կոչված էին ամրապնդել Հայ եկեղեցու իրավագործությունը, բարձրացնել նրա հեղինակությունն ու դերը երկրի կառավարման, հասարակության մեջ բարոյական սկզբունքների արմատավորման և ազգային միասնության հաստատման գործում:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոգևածում մեկնաբանվում է Մխիթար Գոշի իրավաբաղաքական տեսությունը: Մտածողը հիմնավորում է, որ յուրաքանչյուր ժողովուրդ և պետություն պետք է ունենան սեփական օրենսդրությունն ու իրավական նորմերը, ընտրեն դատարան՝ «ըստ ժամանակի, ազգերի և աշխարհների»: Նա պաշտպանում է հայ ազգի ինքնակառավարման, կենտրոնացված թագավորական իշխանության, պետական շահերի գերակայության, գաղափարները: Քանի որ իշխանությունն ունի աստվածային ծագում, և

<sup>46</sup> Նույն տեղում, հոդ. 48, էջ 418-419: Տես նաև՝ հոդ. 36, էջ 414-415:

<sup>47</sup> Տես՝ նույն տեղում, հոդ. 138: Տես նաև՝ հոդ. 139, էջ 453, հոդ. 160, էջ 462:

<sup>48</sup> Տես՝ նույն տեղում, հոդ. 37, էջ 415:

թագավորը կարգվում է Աստծուց, նա պետք է կառավարի աստվածային օրենքներով: Հստ «Դատաստանագրքի» պետության գլուխը՝ թագավորը, օժտված է ինքնիշխանությամբ, ուստի՝ հարկատու չէ այլ ազգերի: Ելնելով իշխանության բաժանման սկզբունքից՝ Գոշն առանձնացնում է իշխանության երկու կառույց՝ պետական և եկեղեցական՝ տարանջատելով դրանց իրավագործությունն ու գործառույթները: Երկու իշխանությունների փոխգործակցությունը Գոշը համարում է պետության կայունության հիմք: Կենտրոնացված քաղաքական իշխանության կարևորագույն խնդիրներն են՝ համապետական իրավական համակարգի ձևավորումը, միասնական առևտրային ու հարկային համակարգի, ներքին ընդհանուր շուկայի ստեղծումը՝ հաղթահարելու առանձին գավառների տեղական անջատողականությունը:

**Բանալի բաներ** Մխիթար Գոշ, «Հայոց Դատաստանագիրք», կենտրոնացված իշխանություն, ինքնիշխանություն, իշխանության բաժանման սկզբունք, միասնական իրավական համակարգ:

## АРГУМЕНТАЦИЯ ИСТОЧНИКА И ФОРМ ВЛАСТИ И ГОСУДАРСТВЕННОГО СУВЕРЕНИТЕТА В “АРМЯНСКОМ СУДЕБНИКЕ” МХИТАРА ГОША

**Лилит Сарвазян**

*Кандидат философских наук, доцент  
старший научный сотрудник Института  
философии, социологии и права ИАН РА*

### РЕЗЮМЕ

В статье интерпретируется политико-правовая теория Мхитара Гоша. Мыслитель обосновывает, что каждый народ и каждая страна должны иметь свое законодательство и правовые нормы, выбирать суд “согласно времени, и нации, и миру”. Он защищает идеи самоуправления и суверенитета армянской нации. Гош сторонник централизованной королевской власти, верховенства государственных интересов, что объясняет также божественным происхождением власти короля, который должен руководствоваться божественными законами. Согласно Судебнику, король обладает суверенной властью. Исходя из принципа разделения власти, Гош в политической структуре армянского государства



выделяет государственную и церковную формы власти, в то же время строго разграничивая сферу юрисдикции каждой из них. Взаимодействие обеих форм власти он рассматривает как фактор обеспечения устойчивости государственного устройства. Важнейшие функции центральной политической власти являются создание единой правовой, торговой и налоговой системы, общего внутреннего рынка.

**Ключевые слова:** Мхитар Гош, Армянский Судебник, централизованная власть, суверенитет, принцип разделения власти, единая правовая система.

## **ARGUMENTATION OF GOVERNMENT SOURCE, FORMS AND STATE SOVEREIGNTY IN "ARMENIAN CODE OF LAWS" BY MKHITAR GOSH**

**Lilit Sarvazyan**

*Candidate of Philosophical Sciences, Associate Professor  
Senior Researcher of the Institute of Philosophy,  
Sociology and Law of NAS RA*

### **SUMMARY**

The article reviews the legal-political theory of Mkhitar Gosh. The prominent thinker argues soundly that every nation and state should have their own legislature and legal norms, choose the court "according to time, nations and worlds". He defends the ideas of the Armenian nation's self-government, centralized royal power, supremacy of state interests. Since the government has divine origin, and the king is ordained by God, he must rule by divine laws. According to "Code of Laws" the head of the state, the king, is endowed with sovereignty, thus is not a taxpayer to other nations. Based on the principle of power separation Gosh divides two power structures - state and church - separating their jurisdiction and functions. According to Gosh the cooperation between the two governments is considered as a foundation for the state stability. The most important issues of the centralized political power are the formation of nationwide legal system, creation of united commercial and tax system and internal common market to overcome the local separatism of several provinces.

**Key words:** Mkhitar Gosh, "Armenian Code of Laws", centralized power, sovereignty, principal of power separation, united legal system.